ԶՈՒԼԻԵՏԱ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ

3

Դասագիրք
Սփյուռքի դպրոցների համար

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2014

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075.3)
ԳՄԴ 81.2Հ g7
Գ 673

Գյուլամիրյան Ջուլիետա
Գ 673 ՄԱՅՐԵՆԻ 3: Դասագիրք Սփյուռքի դպրոցների համար/
Ջ. Գյուլամիրյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2014.— 80 էջ:

ՀՏԴ 373.167.1:809.198.1(075.3)
ԳՄԴ 81.2Հ g7

ISBN 978–9939–68–294–5

© Գյուլամիրյան Ջ., 2014
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2014

Ես _____ եմ:

Սովորում եմ _____:

(քաղաքը, դպրոցը, դասարանը)

Հայրս _____ է:

Մայրս _____ է:

Հայերենի իմ ուսուցիչը _____–ն է:

Ապագայում ուզում եմ _____ դառնալ:

Իմ սիրած լեզուներն են _____:

Սիրում եմ խաղալ _____:

ԻՄ ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐԸ

_____

_____

_____

_____

_____

_____

_____

_____



ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՆ Է

ՀՀ Կառավարության շենքը Հանրապետության հրապարակում

Հայաստանը հայերի հայրենիքն է: Հայերը Հայկական լեռնաշխարհի առաջին բնակիչներն են: Մենք հպարտ ենք, որ աշխարհի գեղեցիկ լեզուներից մեկը հայերենն է: Մեր հայրենիքն ունեցել է տարբեր անուններ՝ Արարատյան թագավորություն, Վանի թագավորություն, Հայք, Հայաստան: Օտարներն այն անվանել են Արմենիա, Նաիրի, Հայասա, Ուրարտու և այլն:

Հայ ժողովուրդն ունի հարուստ ու արժեքավոր մշակույթ:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Բացատրի՛ր՝ ինչ է նշանակում հայերը Հայկական լեռնաշխարհի առաջին բնակիչներն են:**
2. **Հիշի՛ր Հայաստանի մայրաքաղաքների անունները: Հետաքրքրվի՛ր՝ որ տարածքներում են դրանք եղել:**

3. Ուշադիր դիտիր «Մայր Հայաստան» արձանը: Պատմիր՝ ինչ գիտես նրա մասին:

4. «Հրաշք տետրում» փակցրու Հայաստանի տեսարժան վայրերի և մշակութային արժեքների նկարներ: Գրիր դրանց մասին տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆ

Պարվական Խաչատրյան

Հայաստանը
Իմ անունն է,
Ազգանունը,
Ինձ ուժ տվող զորությունն է:
Իմ լեզուն է, այբուբենը,
Որ կոչվում է հայրենի տուն:
Եվ ես հիմա իմ տան պատին
Նոր–նոր քարեր պիտի դնեմ,
Որ գնալով հզորանա,
Ծլարձակի[1] ու նորանա:

Իմ բառարանը

[1] **ծլարձակել** – փթթել, ծաղկել, բարգավաճել

5. **Բացատրիր «ինձ ուժ տվող զորությունն է» արտահայտության իմաստը:**

6. **Որոշիր ծլարձակել բառի արմատները: Բառիմաստը բացատրիր արմատների օգնությամբ:**

7. **Որոշիր տրված բառերի արմատները և բացատրիր, թե ինչ իմաստային տարբերություն կա այդ բառերի միջև:**

հայ – հայեր	անուն – անուններ
լեզու – լեզուներ	գետ – գետեր

Ճիշտ նկատեցիր. բառերն իրարից տարբերվում են –եր և –ներ մասնիկներով:

Հիշիր

Միավանկ բառերի հոգնակին հիմնականում կազմվում է –եր մասնիկով, իսկ բազմավանկ բառերինը՝ –ներ մասնիկով:

Օրինակ՝ նավ – նավեր, աթոռ – աթոռներ:

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԳԱՐԻՏԸ

Հայաստանի քարտեզին նայելիս անպայման կնկատես, թե որքան շատ լեռներ ունի մեր հայրենիքը: Սակայն դրանց շրջակայքում ուշադրություն է գրավում Սևանա լիճը: Հնում լիճը եղել է փոքր, սակայն հզոր հրաբուխի հետևանքով փակվել է Սևանից դուրս հոսող գետի ճանապարհը: Դրանից հետո Սևանի ջրերը շատացել են:

Ես հիշում եմ

Բառի հիմնական իմաստն արտահայտող մասը կոչվում է արմատ:

Օրինակ՝ գյուղական, լեռնային, անհամ:

Ընդգծված մասերը բառերի արմատներն են:

«Հայաստանի մարգարիտը» պատմության մեջ հանդիպեցիր հրաբուխ բառին: Եկ որոշենք այդ բառի արմատները: Հրաբուխ. հուր, որը նշանակում է կրակ և բխել, որ նշանակում է դուրս թափվել՝ հորդել:

ՍԵՎԱՆ

Գեղամ Սարյան

Սևանի կապո՛ւյտ ջրեր,
Կարծես թե նազում[1] եք դուք,
Կարծես թե ափերն ի վեր
Կարկաչով[2] վազում եք դուք:

Ձեր շուրջը սարեր կան ծեր,
Նրանց պատկերն է ձեր սրտում,
Կարծես թե հազարագույն,
Բյուրեղյա[3] վազում եք դուք:

Սևանի կապուտա՛կ ջրեր,
Նոր կյանքի ալի՛քն եք դուք,
Դարձել եք արտ, այգիներ,
Բերքառատ բարիք եք դուք:

Տեսարան Սևանա լճից

Իմ բառարանը

[1] **նազել** – նազանքով շարժվել
[2] **կարկաչ** – հոսող ջրի մեղմ ձայն, խոխոջ
[3] **բյուրեղյա** – այստեղ՝ բյուրեղի նման մաքուր, վճիտ

Հարցեր և առաջադրանքներ

1. Ուշադիր դիտիր Հայաստանի քարտեզը, ցույց տուր Սևանա լիճը: Նկատեցիր՝ նրա շուրջը փռված են գեղեցիկ լեռներ: Դրանք Գեղամա լեռներն են:

2. Հետաքրքրվիր՝ ինչ ձկներ են ապրում Սևանում:

3. Ըստ նմուշօրինակի՝ կազմիր նոր բառեր:

ձուկ – ձկնեղեն	*սահման – անսահման*
միս –	տուն –
ջուր –	օգուտ –

4. Ինքնաթելադրությամբ գրիր բանաստեղծության առաջին տունը:

ԵՐՐՈՐԴ ԴԱՍ

ՇԻՆԱՐԱՐ ԵՆ ՀԱՅԵՐԸ

Սիրելի՛ հայորդի, ես ուզում եմ, որ դու իմանաս, թե ինչպիսին են եղել քո պապերը: Նրանք եղել են շինարար, բարի ու խաղաղասեր, կառուցել են եկեղեցիներ, գործարաններ, ծառ են տնկել ու իրենց զավակներին էլ սովորեցրել են նույնը անել: Հայերն ապրում են աշխարհի տարբեր երկրներում, ամենուր նրանք կառուցում են և ստեղծում:

Հարցեր և առաջադրանքներ

1. **«Հրաշք տետրում» փակցրու քեզ ծանոթ նշանավոր հայ մարդու նկար: Պատմիր նրա մասին:**

2. **Կարդա՛ բառերը, որոշիր, թե ո՞ր տառն ես այլ հնչյունով արտաբերում:**

երգ	մարգարիտ	ձագ
կարագ	օգուտ	Սարգիս

3. **Սովորիր դրանք թելադրությամբ գրել:**

ԿԱՄՈ՛ՒՐՋ ԿԱՌՈՒՑԻՐ

Մարո Մարգարյան

Հենց որ ջուր տեսնում,
Առվակ ես շինում,
Ափերն ամրացնում,
Կամուրջ ես դնում:

Որտեղի՞ց գիտես,
Իմ պայծառ գարուն,
Թե ինչ թանկ բան է
Կամուրջն աշխարհում:

Կամո՛ւրջ կառուցիր,
Իմ փոքրիկ տղա,
Միացրու անջատ
Ափերն աշխարհի:

Ճամփանե՛ր շինիր
Աշխարհի վրա
Ամենազորեղ,
Դիմացկուն քարից:

4. **Ինչո՞ւ է, հեղինակի կարծիքով, կամուրջը կարևոր շինություն:**

5. **Բացատրիր բանաստեղծության վերջին քառատողի իմաստը:**

6. Որոշի՛ր տրված բառերի արմատները, բացատրի՛ր բառազույգերի տարբերությունը:

գարուն – գարնանային	զորեղ – ամենազորեղ
կամուրջ – կամրջակ	առու – առվակ

Նկատեցի՞ր՝ արմատների վրա ավելացած մասնիկները նոր իմաստ՝ նշանակություն են տվել բառին: Տե՛ս՝ կամուրջ բառի վրա ավելացել է –ակ մասնիկը, ու կամուրջը դարձել է ավելի փոքր՝ կամրջակ:

Հիշի՛ր

Այն մասնիկը, որը, ավելանալով բառի սկզբին կամ վերջին, նրան նոր իմաստ է տալիս, կոչվում է ածանց:

Օրինակ՝ միրգ – մրգային, սահման – անսահման:
Միրգային, անսահման բառերը ածանցավոր են:

Կիևյան կամուրջը Երևանում

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ



ԵՍ ՀԱՅ ԵՄ

Սուրեն Մուրադյան

Պապերս՝ փառապանծ[1], քաջազուն[2],
Անցել եմ երկար ճանապարհի,
Հին են երգերը, իմ լեզուն,
Եղել եմ վարպետ շինարար:

Հին հայկական դրամ՝ Տիգրան Մեծի պատկերով

Երգս՝ դարավոր,
Միտքս՝ թևավոր,
Ես հայ եմ,
Մենք հայ ենք
Զորավոր[3]:

Իմ տունը հավերժ[4] է, միշտ կանգուն,
Ուզում եմ ապրել ես խաղաղ,
Ապրիր դու, Հայաստան իմ ծաղկուն,
Հայրենի՛ իմ տուն, ի՛մ օջախ:

Իմ բառարանը

1 **փառապանծ** – փառքի ու պարծանքի արժանի
2 **քաջազուն** – քաջարի տոհմից, ազնվազարմ, ազնվական
3 **զորավոր** – ուժեղ, հզոր
4 **հավերժ** – մշտատև, հավիտենական, անվերջ

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ինչպիսի՞ն են հայերը՝ ըստ բանաստեղծության:**

2. **Ուշադի՛ր կարդա և գրի՛ր հայրենիք, հայրություն, անհայր, Հայրապետ բառերը: Որոշի՛ր այն բառը, որ կա բոլոր բառերի մեջ:**

3. **Կարդա՛ տրված բառերը, սովորի՛ր ուղղագրությունը և պատրաստվի՛ր գրելու թելադրություն:**

աշխարհ	շնորհք	շնորհակալություն
ճանապարհ	շնորհակալ	ճանապարհորդ

4. **Գրի՛ր ինքնաթելադրություն:**

Հայաստանը իմ անունն է,
Ինչ ուժ տվող կորությունն է:

ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՄ ՊԱՊԵՐԻ ԵՐԿԻՐՆ Է, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է

Հայերը, որտեղ էլ որ ապրել են, առաջին հերթին եկեղեցի և դպրոց են կառուցել: Հայերն, օրինակ, Արցախ աշխարհի բնիկ ժողովուրդն են: Լսի՛ր պատմեմ մի վանքի մասին, որն արցախցիները կառուցել են շատ դարեր առաջ:

Գանձասարի վանքը Արցախում

ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԸ

Գանձասարի վանքն Արցախում Գանձասար լեռան վրա է: Այնտեղ տանող ճանապարհն անցնում է Վանք գյուղի միջով: Գանձասարը կառուցել են մեր պապերը մոտ ութ հարյուր տարի առաջ: Վերջերս այն նորոգվել է ու դարձել գործող վանք: Գանձասար են այցելում ոչ միայն Արցախի ու Հայաստանի բնակիչները, այլև Արցախ եկած զբոսաշրջիկներ ու հյուրեր աշխարհի տարբեր երկրներից:

Գանձասարի վանքը Արցախում

5. Կարդա՛ և ընդգծի՛ր այս պատմության մեջ գործածված բարդ բառերը:

Գիտե՞ս, որ...

Արցախում կա մի սոսի: Այն տարածաշրջանի ամենաբարձր ու ամենատարեց ծառն է՝ մոտ 2000 տարեկան: Ըստ ավանդության՝ նրա ստվերի տակ հանգստացել են Մեսրոպ Մաշտոցը, Սայաթ–Նովան, Մովսես Խորենացին: Այդ ծառի փչակը երեքսենյա-կանոց բնակարանի չափ է:

2000 տարեկան սոսին

6. Պատմի՛ր՝ ինչ իմացար Արցախի մասին:

Հիշի՛ր

Արցախում ապրողներին ասում են արցախցի:
Երևանում ապրողներին՝ երևանցի:

7. Իսկ ինչպե՞ս են ասում Գյումրիում, Լոռիում, Ապա-ռանում ապրողներին:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍԿԵ ԱԾՈՒՆԸ



Արա Բաղդասարյան. «Հայաստան»

Հայաստանում տարվա բոլոր եղանակները շատ գեղեցիկ են: Սակայն շատ շքեղ է Հայաստանի աշունը: Ծառերն ու թփերը, դաշտերն ու այգիները աշնանը ծածկվում են ոսկեդեղին ու նարնջագույն տերևներով, և թվում է՝ ողջ բնությունը ոսկի հանդերձներ[1] է հագել: Արևահամ են Հայաստանի մրգերը՝ սև սալորն ու դեղին տանձը, թավշյա[2] դեղձն ու կարմրաթուշ[3] խնձորը, ոսկեհատ ու սևաչ խաղողը:

Իմ բառարանը

[1] **հանդերձ** – հագուստ, զգեստ

[2] **թավշյա** – թավշի նման խավոտ, աղվամազով պատված

[3] **կարմրաթուշ** – այստեղ՝ մի կողմը կարմիր

Հարցեր և առաջադրանքներ

1. Որոշի՛ր այս բառերի արմատները: Դրանց իմաստը բացատրի՛ր հենց այդ արմատների միջոցով.

ոսկեդեղին, նարնջագույն, արևահամ, կարմրաթուշ, սևաչ

ԱԾՈՒՆ

(հատված)

Համո Սահյան

Աշնան օրերն են հասել,
Իջել է ամպը սարին,
Եվ հրաժեշտ է ասել
Կռունկը մեր աշխարհին:

Բարդին էլ չի սոսափում[1]
Արագիլի թևի տակ,
Դեղին թերթեր է թափում
Առվակի մեջ կապուտակ:

Կարմիր խարույկ է կարծես
Ծեր տանձենին անտառի,
Թվում է, թե մոտ վազես,
Ձեռք ու ոտքդ կվառի...

Իմ բառարանը

[1] **սոսափել** – ճյուղերը շարժելով՝ մեղմ ձայն հանել

2. Բացատրի՛ր բանաստեղծության առաջին քառատողի իմաստը:

3. Պատմի՛ր Հայաստանի աշնան մասին՝ ըստ տրված բանաստեղծության:

Ժողովուրդն ասում է...

Գարունը ծաղիկներով է գեղեցիկ,
աշունը՝ բերքով։

4. Սյունակներից ընտրիր արմատներ և ածանցներ, կազմիր նոր բառեր։

տանձ	–այինն	ծույլ	–ոտ
պար	–ական	արև	–ություն
գյուղ	–ենի	անուշ	–ալի
առողջ	–եղեն	ջուր	–եղեն
միրգ	–ություն		

Մի բույս գիտեմ դեղնավուն,
Արևին է նմանվում,
Որ կողմն արևը թեքվի,
Բույսը նրան կնայի։

Ինքը՝ փոքրիկ,
Կարմիր կուժ,
Դուրսը՝ կոկիկ,
Ներսը՝ փուշ։

Ես հիշում եմ

Աշնան ամիսներն են՝ սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր:

5. Պատրաստվիր թելադրություն գրելու:

ամպ, բարդի, ջեռք, խարույկ, կռունկ, աշխարհ, ուրֆ, վառել

Գիտեմ, որ...

Հայերն անսահման հյուրասեր են: Ամեն օտարա-կան անցորդի հայ մարդը օթևան կտա ու կպատվի: Հեթանոսության շրջանում հայերն ունեցել են հյու-րասիրության աստված՝ Վանատուրը: Նրա գլխավոր մեհյանը Բագավան քաղաքում էր, որը կոչվում էր նաև Դիցավան, այսինքն՝ աստվածների բնակավայր:

Հիշիր

Միայն արմատից կազմված բառը կոչվում է պարզ բառ:

Օրինակ՝ տուն, ծառ, նկար և այլն:

Երկու և ավելի արմատներով կազմված բառը կոչվում է բարդ բառ:

Օրինակ՝ ջրաներկ, հյուրասենյակ, ծաղկաման:

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ



ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Տաթևի վանքը

Գիտե՞ս՝ հայերը շատ աշխատասեր ժողովուրդ են: Աշխարհի բազմաթիվ երկրներից ժամանած այցելուների հիացնում են հայերի կառուցած եկեղեցիները, թանգարաններն ու արձանները: Դրանք հպարտ են հայոց լեռների պես, ամուր՝ հայ մարդու ոգու նման, գեղեցիկ՝ ինչպես հայերը...

Հայաստան այցելողներին հիացնում են Տաթևի, Մարմաշենի, Հաղարծինի, Գանձասարի վանքերը, Հայաստանի մյուս պատմական հուշարձանները:

Հայ մարդը միշտ բարձր է գնահատել հայրենի տունը՝ կառուցված իր հողի վրա:

Սովորություն

Հայերն իրենց որդիներին մաղթում են.

— Տո՛ւն կառուցիր, ծա՛ռ տնկիր, շատ զավակնե՛ր ունեցիր:

Հիշիր

Մեկից ավելի արմատներից և մեկ կամ ավելի ածանցից կազմված բառը կոչվում է բարդ ածանցավոր:

Օրինակ՝ դաս + ա + ցույց + ակ = դասացուցակ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Եթե դու Հայաստանում տուն կառուցեիր, որտեղ և ինչպիսի՞ տուն կուզենայիր կառուցել: Ի՞նչ ծառեր ու ծաղիկներ կտնկեիր ձեր բակում: «Հրաշք տետրում» նկարի՛ր այդ տունը:

Հայկական սովորություն

Հայկական ընտանիքներում ծնողները, պապերն ու տատերը մեծ հեղինակություն են: Նրանց խոսքը օրենք է բոլորի համար: Ընտանիքի ավագները խորհուրդներ են տալիս, օրինանքներով խրախուսում տան կրտսեր անդամներին: Ազգի մեծերը նույնպես թողնում են իրենց իմաստուն մաղթանքները[1], կտակները[2], որոնք սերունդները սրբությամբ են կատարում:

Իմ բառարանը

[1] **մաղթանք** – բարեմաղթություն, հաջողության, առողջության և այլ ցանկության արտահայտություն

[2] **կտակ** – այստեղ՝ սերունդների վրա իբրև պարտականություն դրվող նվիրական ցանկություն

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԿՏԱԿԸ

Աշխարհահռչակ հայ գիտնական, աստղագետ Վիկտոր Համբարձումյանը թողել է մի կտակ հայոց լեզվին տիրապետելու մասին: Այն ուղղված է բոլոր հայ երեխաներին:

«...Կտակում եմ ինձ հաջորդող սերունդներին, թոռներիս, ծոռներիս՝ տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերենից՝ անկախ նրանից, թե ինչպիսի տոկոս է կազմում նրա մեջ հայկական արյունը: Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ[1], և այդ գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է:

Յուրաքանչյուր սերունդ պարտավոր է հաջորդին սովորեցնել հայոց լեզուն:

Գիտցի՛ր, որ իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է և կմնա, քանի ապրում եմ, հայոց լեզվին տիրապետելը:

Ցանկանում եմ երջանկությո՛ւն բոլորիդ: Դա նշանակում է, որ պետք է լա՛վ տիրապետել հայոց լեզվին:

29. 08. 1994

Իմ բառարանը

[1] **գաղափար** – միտք, իմաստ, սկզբունք, համոզմունք

2. Պատմի՛ր Վիկտոր Համբարձումյանի կտակի մասին:

3. Իսկ ի՞նչ են քեզ պատվիրում պապիկներդ ու տատիկներդ:
«Հրաշք տետրում» գրի՛ առ պապիկներիդ և տատիկներիդ պատվիրանները: Բացատրի՛ր դրանց իմաստը: Մտածի՛ր՝ արդյոք կատարում ես դրանք:
Ընտրի՛ր գրառած պատվիրաններից մեկը և պատմի՛ր, թե ինչ ես անում այն իրականացնելու համար:

ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍ



ԸՆՏԱՆԻՔ

Աշխարհի բոլոր ժողովուրդների համար ընտանիքը թանկ է: Ընտանիքը հայրիկն ու մայրիկն են և նրանց երեխաները: Հայ ընտանիքում բոլորի հետ միասին ապրում են նաև պապիկն ու տատիկը, հաճախ նաև՝ հարսներն ու թոռները:

Չկա ավելի մեծ հարստություն հայ ժողովրդի համար, քան նրա բազմանդամ ընտանիքները: Դրանք հայ մարդը պահպանում է որպես սրբություն, ինչպես մայր լեզուն, մայր հայրենիքը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Մեծերից հետաքրքրվի՛ր հայ ընտանիքի սովորությունների մասին և պատրաստվի՛ր դասարանում պատմելու:

Հայ ժողովուրդը օրհնում է...

- *Յոթ որդով սեղա՛ն նստես:*
- *Որդիներդ ո՛ղջ լինեն:*

- *Տաշտակդ միշտ հա՛ց լինի։*
- *Սեղանդ միշտ բա՛ց լինի։*
- *Ուր որ գնաս, կանա՛չ բուսնի։*

Կարդա՛ այս բանաստեղծությունը ընտանիքիդ անդամների համար։

ԿԱՆՉՈՒՄ Է ՔԵԶ...

Մարո Մարգարյան

Ճամփի եզրին
Խոտի մի դեզ[1],
Պարզ մի խրճիթ[2],
Մի պատուհան
Կանչում է քեզ,
Կանչում է քեզ...

Մի մասրենի
Սիրակարոտ[3]
Տաք աշխարհից
Քո քարքարոտ
Կանչում է քեզ,
Կանչում է քեզ...

Լավ է աշխարհն,
Լավ է ամեն
Ճամփա ու տուն՝
Բարիքներով,
Բույրերով լի...

Բայց թե խորունկ
Դու չսիրես
Փոքրիկ տունը
Քո հայրենի,
Դժվար թե քեզ
Աշխարհի մեջ
Շատ սիրելի
Մի տեղ լինի։

Իմ բառարանը

[1] **դեզ** – կույտ
[2] **խրճիթ** – փոքրիկ տուն, հյուղ
[3] **սիրակարոտ** – սիրով ու կարոտով լցված

Եկ զրուցենք

Երբևէ պապիկիդ կամ տատիկիդ հարցրե՞լ ես ձեր գերդաստանի[1], նախնիների[2] զբաղմունքի, կատարած գործերի մասին: Եթե չես հարցրել, ուշ չէ: Հետաքրքրվի՛ր, թե ովքեր են եղել նրանց ծնողները, պապիկներն ու տատիկները, ինչով են զբաղվել, որտեղ են ապրել: Խնդրի՛ր քեզ ցույց տալ նրանց նկարները, պատմել մանրամասներ նրանց կյանքից:

Այդ բոլորը լսելուց հետո պատմի՛ր ձեր գերդաստանի մասին:

Չմոռանաս շարադրանքդ վերնագրել:

Իմ բառարանը

[1] **գերդաստան** – մեծ ընտանիք, ազգականների ամբողջություն

[2] **նախնիներ** – նախորդ սերունդներ

2. Որոշի՛ր **պատուհան**, **սիրակարոտ**, **քարքարոտ**, **փոքրիկ** բառերի արմատներն ու ածանցները:

Հիշի՛ր

Բառի սկզբին ավելացած ածանցները կոչվում են **նախածանցներ**, իսկ բառավերջին ավելացածները՝ **վերջածանցներ**:

Սովորություն

Հայերի մեջ ընդունված է պապի և տատի հայկական անունները տալ թոռնիկներին: Դրա մեջ կա այդ ճանապարհով ևս նրանց հիշատակը վառ պահելու խորհուրդը:

3. Հետաքրքրվի՛ր քո անվան պատմությամբ: Եթե այն ուշագրավ է, ներկայացրո՛ւ ընկերներիդ:

4. Անուններ տուր սեղանի շուրջ նստած ընտանիքի անդամներին: Պատմի՛ր այդ ընտանիքի մասին: Պատմությունդ վերնագրի՛ր:

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ



ՀԱՅԵՐԻ ԳԱՆՁԸ

Դու գիտես, որ Հայաստանը քարքարոտ երկիր է: Բայց այդ քարքարոտ հողից էլ ժողովուրդը «հաց է քամում»: Իսկ ո՞րն է գաղտնիքը: Հայ ժողովուրդն ունի մի մեծ գանձ: Դա նրա աշխատասիրությունն է: Ահա մի զվարճալի պատմություն այդ մասին:

Աստծուն լուր են տալիս, որ Հայոց աշխարհում օր ու գիշեր աշխատում են, չեն հանգստանում, չեն քնում: Աստված զայրանում է, որ նույնիսկ իր ստեղծած կիրակի օրը հայերը չեն հանգստանում: Նա իր հրեշտակներից մեկին ուղարկում է Հայոց երկիր:

Հրեշտակին տեսնելուն պես հայերը նրա թևից քաշում են ու ասում.

— Ի՞նչ ես կանգնել, արի՛ մեզ հետ աշխատիր:

— Բայց ես ձեզ ասելիք ունեմ,— ասում է հրեշտակը:

— Հետո՛,— պատասխանում են հայերը և շարունակում աշխատել:

Տեսնելով, որ իրեն լսող չկա՝ հրեշտակը սկսում է ինքն էլ աշխատել: Աստված ուղարկում է երկրորդ հրեշտակին: Սա էլ չի վերադառնում: Ուղարկում է երրորդին: Սա էլ է մնում այնտեղ:

Աստված ստիպված ինքն է գնում և թաքուն հետևում, թե հայերն ինչ են անում: Նա հայերի մեջ տեսնում է իր

երեք հրեշտակներին, որոնք ուրախ–ուրախ աշխատում են: Աստված վերադառնում է երկինք՝ ասելով.

— Ես այլևս ոչ մի հրեշտակի չեմ ուղարկի հայերի մոտ: Նրանք իրենց աշխատասիրությամբ կվարակեն բոլորին, և նրանցից ոչ մեկը երկինք չի վերադառնա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմիր, թե ինչպես Աստված իմացավ հայերի աշխատասիրության մասին:

Հիշիր

Մեկից ավելի արմատներից և մեկ կամ ավելի ածանցից կազմված բառը կոչվում է բարդ ածանցավոր:

Օրինակ՝ աշխատ + ա + սիր + ություն:

Ժողովուրդն է ասում

- *Աշխատանքը բարիք է, ծուլությունը՝ չարիք:*
- *Ով աշխատի, նա կուտի:*
- *Աշխատող խոփը կփայլի:*
- *Աշխատիր ուրիշի համար, սովորիր քեզ համար:*

2. **Կարդա՛ այս բանաստեղծությունը ընտանիքիդ անդամների համար: Քննարկի՛ր նրանց հետ բանաստեղծի մտքերը:**

ԾՈՒՅԼ ՁԵՌՔԵՐԸ

Շատ լավ գիտեն մայրիկները,
Հայրիկներն ու բալիկները[1],
Որ չի կարող ոչ ոք նստել
Ոտք չունեցող աթոռակին:

Որ չի կարող կառքը[2] շարժվել,
Թե անիվներ չկան կարգին,
Որ չես փրկվի ցրտից ահեղ[3],
Վառարանում թե փայտ չկա:

Որ ասեղը ասեղ չէ դեռ,
Թե անցք չունի պոչի վրա:
Ճիշտ այդպես էլ մեր այս կյանքում
Ձեռքերը՝ ծույլ ու անհոգի,
Թե աշխատանք չեն կատարում,
Հարկավոր չեն և ոչ մեկի:

Իմ բառարանը

[1] **բալիկ** – փոքրիկ երեխա, որդյակ, մանկիկ
[2] **կառք** – ծածկ ունեցող մարդատար երկանիվ կամ քառանիվ սայլ
[3] **ահեղ** – սարսափելի, ահավոր

3. **Ի՞նչ է սովորեցնում այս բանաստեղծությունը։ Որոշի՛ր և ասա՛ մեկ նախադասությամբ։**

Սովորություն

Երբ հայը տուն է կառուցում, յուրաքանչյուր բա-
րեկամ ու հարևան պիտի առնվազն մեկ քար դնի
նրա պատին։

ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ



Հովհաննես Թումանյան

ԾԱՂԻԿՆԵՐԸ

— Ո՞ւր գնացին ծաղիկները:
— Սո՛ւս, քնած են հողի տակ՝
Տաք ծածկված ողջ ձմեռը
Ձյուն–ծածկոցով սպիտակ:

Կգա գարնան արևն էլ ետ
Իր շողերով կենդանի,
Ձմռան սաստիկ ցրտերի հետ
Ձյուն–ծածկոցը կտանի:

«Ելե՛ք,— կասի,— ի՛մ մանուկներ»:
Ու հենց նրանք իմանան,
Դուրս կհանեն գլխիկները,
Աչիկները կբանան:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ի՞նչ ես կարծում, լա՞վ է, որ ձմռանը ձյուն է գալիս:**
2. **Ծաղիկներին նամա՛կ գրիր և համոզի՛ր, որ չտխրեն:**
3. **Նկարագրի՛ր քո բնակավայրի ձմեռային բնությունը:**

4. **Սովորիր ճիշտ կարդալ և գրել:**

ողջ, ապիրակ, երգ, ջյուն, արև, կենդանի

Կարդա՛ այս բանաստեղծությունը և պատասխանի՛ր փոքրիկ հերոսի հարցերին:

ՀՐԱՇԱԼԻ ՆԿԱՐԸ

Ռուբեն Ղարիբյան

Ո՞վ է արել,
Ո՞վ է արել,
Մեր սենյակի լուսամուտին
Ո՞վ է նկարն այս նկարել...
Նկարի մեջ՝ ճերմակ ծառեր,
Նկարի մեջ՝ ձյունոտ սարեր,
Իսկ սարի տակ, անտառի տակ՝
Սառույց կապած մի լուռ գետակ:
Իսկ գետակից մի քիչ հեռու
Վիզը բարակ մի եղջերու
Կարծես կանգնել
Ինձ է նայում:
Իսկ անտառում՝
Թփերի տակ,
Կուչ է եկել
Մի նապաստակ:
Գուցե խաբել քաջ որսորդին,
Մտել է նա այս թփի տակ...
Հրաշալի, սիրուն նկար,
Ո՞վ է արել:

Ո՞վ է արել,
Բայց նկարն այս երեկ չկար,
Մեր սենյակի լուսամուտին
Ո՞վ է նկարն այս նկարել:

5. **Նկարագրի՛ր պատուհանի նախշերը ցուրտ ձմռանը: Կարդա՛ առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը:**

6. **Նկարի՛ր պատուհանի նախշերն ըստ բանաստեղծության:**

7. **Բանաստեղծության մեջ գտի՛ր առարկան և իր հատկանիշը ցույց տվող երեքական բառազույգ:**

8. **Գրի՛ր ինքնաթելադրություն:**

Կգա գարնան արևն էլ եր
իր շողերով կենդանի,
Ձմռան սառուցիկ ցուրտերի հետ
Ձյուն–ծաձկոցը կրանի:

9. **Ուշադի՛ր կարդա ձախ և աջ սյունակում տրված բառաշարքերը: Որոշի՛ր՝ դրանցից որն է իմաստ, միտք արտահայտում:**

ձյուն, նկարել, պատուհանի, է, նկարել	Պատուհանի վրա ձյունը աստղեր է նկարել:

Ճիշտ ես. աջ սյունակի բառերը միտք են արտահայտում, ուրեմն աջ սյունակում տրվածը նախադասություն է:



ՇՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Շատ դարեր առաջ հայերը Նոր տարվա սկիզբ են համարել մարտի 21–ը: Այդ տոնը կապել են բնության արթնանալու՝ գարնան հետ: Հետագայում նրանք Նոր տարվա սկիզբ համարել են հին հայկական օրացույցի առաջին ամսվա՝ Նավասարդի 1–ը: Նոր օրացույցով դա օգոստոսի տասնհինգն է և կապված է բերքահավաքի տոնի հետ: Իսկ հիմա Նոր տարին նշում են հունվարի 1–ին: Նոր տարվա տոնը հայերն անվանել են նաև Ամանոր, Կաղանդ: Այդ օրը, ինչպես ամեն տեղ, հայ մանուկներին ևս հյուր են գալիս Ձմեռ պապն ու Ձյունանուշը և նվերներ բաժանում նրանց:



Սովորություն

Նոր տարվա օրերին հայերի տանը բացվում է շքեղ սեղան: Մարդիկ այցելում են միմյանց: Երիտասարդները նույնպես հավաքվում են և այցելում իրենց գերդաստանի մեծերին, շնորհավորում նրանց տարեմուտը:

Հարցեր և առաջադրանքներ

1. **Պատմի՛ր՝ ինում երբ են հայերը նշել Նոր տարին:**
2. **Ինչպե՞ս են այժմ նշում Ամանորը Հայաստանում: Իսկ դու ինչպե՞ս ես այն տոնում:**

ՆՈՐ ՏԱՐԻ

Գեղամ Սարյան

Եկել, նստել էր սարին
Մեր սիրելի Նոր տարին.
Այս գիշեր նա եկավ տուն,
Բերեց երգ ու խնդություն:
Բերեց սիրուն տոնածառ,
Վրան՝ լույսերը պայծառ,
Խաղալիքներ գեղեցիկ,
Դեղձանիկներ երգեցիկ,
Բադ, եղջերու և կարապ
Ու ծառի տակ՝ Ձմեռ պապ:
Բարո՛վ եկար, Նո՛ր տարի,
Բե՛ր խաղաղ կյանք ու բարի:

3. Դիտելով նկարը՝ դու նույնպես նկարագրիր քո բնակավայրի ձմեռային բնությունը:

4. Պատմիր քո անցկացրած ամենահետաքրքիր Նոր տարվա մասին:

5. Սովորիր ճիշտ կարդալ և գրել:

երգ, եղջերու, ջրուն, ջմեռ, դեղձանիկ, կյանք, կենդանի, ապիրակ

6. Բանաստեղծության տողերում գտիր և կարդա՛ առարկա, առարկայի հատկանիշ և առարկայի կատարած գործողություն ցույց տվող երեքական բառ:

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԴԱՍ

ՀԱՅԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱԶԳՆ ԵՆ



301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում ընդունվեց որպես պետական կրոն: Ամենայն հայոց առաջին կաթողիկոս դարձավ Գրիգոր Լուսավորիչը: Հայաստանում կառուցվեցին բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր:

Հայերը որ երկրում ապրում են, այնտեղ առաջին հերթին եկեղեցիներ են կառուցում և իրենց զավակների հետ միասին այցելում հայկական եկեղեցիներ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞ւմ անունով ենք մենք կոչվում քրիստոնյա:

ՓՈՔՐԻԿԻ ԱՂՈԹՔԸ

Ո՛վ անուշսիրտ Մայր Հիսուսի,
Լսի՛ր, խնդրեմ, ձայնն իմ սրտի.
Ամանորի արշալույսին
Խաղաղությո՛ւն տուր աշխարհին:
Ծնողներիս գլխի վերև
Թող միշտ ժպտա պայծառ արև,
Եվ բոլորը՝ մեծ ու պստիկ,
Ապրեն անհոգ ու երջանիկ:
Հիվանդներին հասի՛ր դու, Մա՛յր,
Սրբի՛ր արցունքն ու ցավը տա՛ր
Եվ հայ ազգին մեր ցիրուցան
Միավորի՛ր, եղի՛ր պաշտպան:

2. Ո՞ւմ է ուղղում իր աղոթքը փոքրիկը:
3. Ուշադի՛ր կարդա և որոշի՛ր, թե ինչեր է խնդրում փոքրիկը Մարիամ Աստվածածնից:
4. Իսկ դու ի՞նչ կխնդրեիր Մարիամ Աստվածածնից:
5. Որոշի՛ր անուշսիրտ և Ամանոր բառերի արմատները:

Հիշի՛ր

Դու հիշում ես, որ բառերի առջևից կամ վերջից կարող են մասնիկներ ավելանալ և նոր իմաստ հաղորդել բառին: Այդ ավելացող մասնիկները ածանցներ են:

6. **Տրված բառերին ավելացրո՛ւ համապատասխան նախածանցներ և վերջածանցներ: Ասա՛ ստացված բառերը.**

հայ	տոն	որս	վախկոտ
գարուն	հուր	թույլ	գեղեցիկ

Ավանդույթ

Գրիգոր Լուսավորչին երևում է մի տեսիլք[1]: Երկնքից հայտնված հրեղեն[2] սյան միջով իջնում է Քրիստոսը: Նա ձեռքի ոսկե մուրճով ցույց է տալիս Վաղարշապատում գտնվող մի բլուր՝ իբրև տաճարի[3] կառուցման վայր:

Հենց այստեղ էլ կառուցվում է տաճար, անունը՝ Էջմիածին, այսինքն՝ իջավ Աստծո Միածին որդին՝ Քրիստոսը: 301–303 թվականներին կառուցված այդ տաճարը դարձավ հայ ժողովրդի գլխավոր սրբավայրը[4]:

Իմ բառարանը

1 **տեսիլք** – թվացյալ պատկեր, երազ
2 **հրեղեն** – հրից բաղկացած, կրակից կազմված
3 **տաճար** – եկեղեցական շքեղ շինություն
4 **սրբավայր** – սուրբ վայր, ուխտատեղի

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍ



ԶԱՏԻԿ

Զատիկը նշում են գարնանը՝ Քրիստոսի հարության օրը: Հայերը Զատկի տոնին ձու են ներկում, օրինել տալիս, նվիրում միմյանց և ուտում: Ձուն համարվում է հարության և նոր կյանքի սկիզբ:

Սուրբ Գրիգոր Տաթևացին ասում է, որ ձվի կեղևը նման է երկնքին, թաղանթը[1]՝ օդին, իսկ սպիտակուցը՝ ջրին: Դեղնուցը նա նմանեցնում է երկրին: Իսկ կարմիր ներկը խորհրդանշում է, որ աշխարհը փրկվեց Քրիստոսի արյամբ:

Հայերը Զատկից մեկ ամիս առաջ մեծ ափսեի մեջ բամբակ են փռում, թրջում և վրան լցնում գարու հատիկներ: Ամեն օր ջրում են գարու հատիկները: Դրանք կանաչ ծիլեր են տալիս: Զատկի օրը ձվերը ներկում են կանաչ, դեղին, կապույտ և շարում աճած խոտով լի ափսեի մեջ: Տանտիրուհին բրնձով փլավ է եփում և վրան լցնում

չամիչ, ընկույզ, չրեր: Երեկոյան ընտանիքը և հյուրերը հավաքվում են ճաշի սեղանի շուրջ: Ընտանիքի ավագը բաժակ է բարձրացնում և ասում. «Քրիստոս հարյավ[2] ի մեռելոց»: Սեղանի շուրջ նստածները պատասխանում են. «Օրհնյա՛լ է հարությունը Քրիստոսի»:

Իմ բառարանը

[1] **թաղանթ** – նուրբ ու ճկուն մաշկանման պատյան

[2] **հարյավ** – այստեղ՝ վերակենդանացավ, հարություն առավ

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ե՞րբ են նշում Զատիկը:**

2. **Զատկի օրը ինչպե՞ս են միմյանց ողջունում մարդիկ: Անգի՛ր սովորիր այդ խոսքերը.**



3. **Պատմի՛ր, թե ինչպես են տոնում Զատիկը ձեր տանը:**

ԶԱՏԻԿԸ

Գրիգոր Եղիկյան

Ես զատիկն եմ,
Ես զատիկն եմ,
Մեր պարտեզի
Մի հատիկն եմ:
Հյուր եմ գալիս
Գարնան օրով,
Ինքս՝ կլոր,
Կարմիր շորով:

Մեջքիս ունեմ
Սև–սև պուտեր,
Ունեմ մանրիկ,
Սիրուն տոտեր,
Թևիկներ էլ
Ունեմ բարակ,
Թռչկոտում եմ
Թեթև, արագ:

Ման եմ գալիս
Ծաղկեծաղիկ,
Ծծում նեկտար[1],
Խմում շաղիկ[2],
Ամբողջ օրը
Թևիս տալիս,
Մեր պարտեզում
Պար եմ գալիս:

Երբ արևը
Մայր է մտնում,
Իմ հին բույնը
Էլ չեմ գտնում:
Որ թփում էլ
Տանի քունս,
Հենց այնտեղ է
Լինում բույնս:

Իմ բառարանը

[1] **Նեկտար** – քաղցր ծաղկահյութ
[2] **Շաղիկ** – ցողիկ, ցողի կաթիլ

4. Պատմիր՝ ինչ իմացար զատիկ միջատի մասին:

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԴԱՍ



ԱՄԵՆԱՆՎԻՐԱԿԱՆ ՏՈՆԸ

Մայրության և գեղեցկության տոնը Հայաստանում նշում են ապրիլի յոթին: Տոնին կանանց և աղջիկներին ծաղիկներ, բացիկներ ու ջերմ խոսքեր են նվիրում և շնորհավորում գարնանային գեղեցիկ օրվա առթիվ: Այդ օրը, ըստ քրիստոնեական կրոնի, Քրիստոսի ծննդյան ավետման[1] օրն է:

Իմ բառարանը

[1] **ավետել** – բարի լուր տալ

Հիշիր

Բառերի այն խումբը, որը միտք է արտահայտում, կոչվում է նախադասություն:

Օրինակ՝ Մայրերի տոնը գարնանն է:
Բոլոր մայրերը գեղեցիկ են ու բարի:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հաշվի՛ր, թե քանի նախադասություն կա «Ամենանվիրական տոնը» պատմության մեջ:

2. Կարդա՛ պատմության առաջին նախադասությունը, ի՞նչ են անում հարցի օգնությամբ որոշի՛ր գործողություն ցույց տվող բառը:

ՄԱՅՐԻԿԻՍ

Հարություն Հովնաթան

Ո՞վ է կանչում ինձ, այն ո՞վ,
Մա՛յրս՝ անուշ իր ձայնով:
Ո՞վ է ասում ինձ՝ ձագո՛ւկ.
Մա՛յրս՝ շնչով իր տաքուկ:
Գիտեմ՝ բարի են, բարի
Բոլոր մայրերն աշխարհի,
Բայց աշխարհում ինձ համար
Մի աշխարհ կա ու մի մայր:

3. Տրված բառերը դասավորի՛ր այնպես, որ ստացվեն նախադասություններ:

1. Նրանց ծառագայթները արևի գերմայնում էին
2. բայի մասնակցում էին Միջոցառման բոլորը
   Հինահիրից
3. կարարները բարդիների փամուց ուժեղ խռնարիվեցին

Հիշիր

Առարկա ցույց տվող բառը կոչվում է գոյական:

Օրինակ՝ դասարան, ծառ, սեղան և այլն:

Առարկայի գործողություն ցույց տվող բառը կոչվում է բայ:

Օրինակ՝ գնացինք, նկարում են, ծաղկել է:

Ժողովուրդն ասում է...

Մոր սիրտը իմաստուն է:
Մայրը տան ճրագն է:
Մոր սիրտը տիեզերք է:
Մայրը ընտանիքի սյունն է:

ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԴԱՍ



ԳԱՐՈՒՆ

Ղազարոս Աղայան

Տարին չորս եղանակ ունի, բայց ամենից գեղեցիկը, ամենից հաճելին գարունն է:

Սառած գետինը տաքանում է ու սկսում կանաչել: Քնած ծառերը բացվում, փթթում[1] են: Երբ տեսնում ես գույնզգույն ծաղիկները՝ արևի շողերով ողողված[2], կարծում ես, թե փոքրիկ մանուկներ են ժպտում, ճչում, ծիծաղում: Երբ նորեկ թռչուններն էլ ձայն ձայնի տված ծլվլում են, կարծում ես, թե բոլորը, ձեռք ձեռքի տված, պար են գալիս, ցնծում[3], զվարճանում, գարնան գալը շնորհավորում:

Ամենքն էլ ուզում են, որ գարունը շուտ գա և իրենց անուշ արև ու քաղցր օրեր բերի:

Իմ բառարանը

[1] **փթթել** – փարթամորեն աճել
[2] **ողողվել** – այստեղ՝ պատվել, լցվել
[3] **ցնծալ** – սաստիկ ուրախանալ

Ժողովուրդն ասում է...

Մի ծաղկով գարուն չի գա։
Մի ձեռքը ծափ չի տա։

Հարցեր և առաջադրանքներ

1. Նկարագրի՛ր՝ ինչպես է արթնանում բնությունը։
2. Ի՞նչ զգացումներ է ունենում մարդը գարնան գալու հետ։ Պատմի՛ր քո ուրախության մասին։

ԵՍ ԳԱՐՈՒՆ ՏԵՍԱ

Վրեժ Վարդունի

Ես գարուն տեսա
Ամեն բույսի մեջ,
Կանաչ լույսի մեջ,
Արշալույսի մեջ։

Ես գարուն տեսա
Ծաղկանց աչքի մեջ,
Թռչնի կանչի մեջ,
Ծով կարկաչի մեջ։

Ես գարուն տեսա
Շանթ ու շողի մեջ,
Հուլունք ցողի մեջ,
Տաքուկ հողի մեջ։

3. Բանաստեղծն ինչպե՞ս է գարունը «ճանաչում»։
4. Իսկ դու, գարուն ասելով, ի՞նչ ես պատկերացնում։

5. Հետաքրքրվի՛ր ծնողներից դ նրանց ծննդավայրի գարնանային բնության մասին: Նկարի՛ր ըստ նրանց պատմածի:
6. Պատրաստվի՛ր թելադրություն գրելու:

ԳԱՐՈՒՆ

Գարունը դաշտերից քշեց ձյունը: Դեղնած ու թաց տերևների տակից երևաց կանաչ խոտը: Ծառերն սկսեցին բողբոջել: Մեղուներն արթնացան քնից:

Հիշի՛ր

Այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի հատկանիշ և պատասխանում են ինչպիսի՞, որպիսի՞ հարցերին, կոչվում են **ածական**:

Ժողովուրդն ասում է...

Ով գարնանը քնի, աշնանը լաց կլինի:

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ



ԿՐԱԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Սուրեն Մուրադյան

Կրակն ու ջուրը
Շատ հին ժամանակ
Քույր–եղբայր էին
Մի հաշտ[1] հարկի տակ:
Բայց քույր ու եղբայր
Վիճում են մի օր,
Թե ով է արդյոք
Իրենցից հզոր:
Ու քույր կրակը
Բարկանում է շատ,
Կրակ է տալիս
Սարի խոտ ու դաշտ:
Եղբայր ջուրն հազիվ
Կրակն է մարում...
Ու այդ օրվանից
Բաժան են ապրում:

Բայց ինչ էլ լինի,
Քույր են ու եղբայր,
Պապական կանչով[2]
Կապված են իրար:
Երբ եղբայր ջուրն է
Սառնամանիքին
Ձմռանը սառչում,
Քույրը ասում է.
— Տաքացի՛ր, եղբա՛յր,
Ձուր ես ամաչում:
Երբ քույր կրակը
Կիզիչ[3] ամռանը
Խաշվում է բոցում,
Եղբայրն ասում է.
— Խմի՛ր, քույրի՛կ ջան,
Սիրտդ հովացրո՛ւ:

Իմ բառարանը

[1] **հաշտ** – համերաշխ, սիրով
[2] **պապական կանչ** – այստեղ՝ արյան կանչ
[3] **կիզիչ** – այրող

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմի՛ր, թե դու ինչ բառերով ես դիմում քույրիկիդ, եղբորդ: Իսկ ի՞նչ բառերով ես դիմում հայրիկին, մայրիկին, պապիկին:

2. Պատմի՛ր բանաստեղծության բովանդակությունը՝ մանրամասնորեն ներկայացնելով քույր ու եղբոր խոսակցությունը:

3. Ածականների օգնությամբ բնութագրի՛ր ընտանիքիդ անդամներին:

4. Բացատրի՛ր այս խոսքերի իմաստը.

Ժողովուրդն ասում է...

- *Քաղցր լեզուն օձը բնից կհանի:*
- *Օձի կծածը կլավանա, լեզվի կծածը չի լավանա:*

5. Սովորի՛ր ճիշտ կարդալ և գրել:

եղ.այր, քն.ուշ, աշխար., կապու.տ, Մար.իկ, թա.ամել, ջե.քեր, խի.ե, ար.

6. **Գուշակի՛ր հանելուկների պատասխանները: Այդ բառերի հետ գործածի՛ր հարմար ածականներ և բայեր:**

Ես՝ բուրավետ, ես՝ վառվռուն,
Ես՝ ալվան ծաղիկ սիրուն,
Ես՝ քույրերիս միջի զարդը,
Այդ ե՛ս եմ, ես եմ՝ ...ը:

Ծնվեց նա ճերմակ.
Ծնվեց՝ կարծրացավ,
Երբ ջրին հյուսվեց,
Ջուրը քաղցրացավ:

7. **Անգի՛ր սովորիր բանաստեղծությունը: Փորձի՛ր նկարել ըստ բովանդակության:**

ԳԱՐՈՒՆ

Հայրապետ Հայրապետյան

— Ես մանուկ եմ ծաղկավետ,
Ձգեստներս՝ հոտավետ,
Դեմքս՝ պայծառ, ժպտերես.
Ասե՛ք տեսնեմ ո՞վ եմ ես:
— Դու գարունն ես ցանկալի,
Սիրուն զարդը աշխարհի,
Բերում ես վարդ, մանուշակ,
Անթիվ երգեր ու թռչնակ:



ՍՈԽԱԿՆ ՈՒ ՈԶՆԻՆ

Ջուլիետա Գյուլամիրյան

Անտառի բացատում[1] տոնավաճառ էր: Վաճառում էին մորթի, փետուր, կաշի, փշեր: Հավաքվել էին կենդանիները և առևտուր էին անում: Այնտեղ էին նաև սոխակն ու ոզնին: Նրանք այն ժամանակ դեռ մերկ էին: Ոզնին տնտղում[2] էր վաճառվող փշերը և սոխակին համոզում, որ ինքն էլ փուշ գնի:

— Ես կգնեմ փափուկ փետուրներ: Ինձ պետք չեն փշերը,— ասում էր սոխակը:— Ես այնպիսի քնքուշ ձայն ունեմ և այնպես քաղցր եմ երգում, որ ոչ ոք ինձ վնաս չի պատճառում, բոլորն ինձ սիրում են: Ես շրջապատի վրա կարող եմ ազդել իմ քնքշությամբ ու խելքով:

Ոզնին երկար մտածեց, փորձեց փշերը և ընտրեց դրանցից ամենասուրերը: Փշերն ընտրելուց և իր վրա շարելուց հետո պտտվեց, հիացավ իրենով և քթի տակ մռթմռթաց:

— Ինձ ոչ ոք բանի տեղ չի դնում, ոչ մեկը չի նկատում իմ գոյությունն անտառում: Ա՛յ, հիմա այս փշերով ես կծակեմ բոլորին, որպեսզի բոլորն ինձնից վախենան:

Իմ բառարանը

[1] **բացատ** – անտառում բաց տեղ, ազատ տարածություն
[2] **տնտղել** – զննել, շոշափելով քննել, ծանրութեթև անել

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ սոխակին փշեր պետք չէին:

2. Ինչո՞ւ ոզնին ընտրեց ամենասուր փշերը:

3. Պատմվածքն այնպե՛ս պատմիր, որ ոզնին փշեր չգնի:

4. Պատմվածքին շարունակությո՛ւն հյուսիր:

5. Գուշակի՛ր հանելուկի պատասխանը:

Այն ո՞վ է, որ
Ունի ասեղ անհամար,
Բայց ոչ մի շոր
Դեռ չի կարել իր համար:

6. Պատրաստվիր փոխադրություն գրելու:

ՈԶՆԻՆ

Ոզնին այգու բարեկամն է: Նա ոչնչացնում է վնասատուներին: Ոզնին խաղող է սիրում: Նա իր փշերի վրա հավաքում է խաղողի հատիկները և տանում տուն: Տանը ոզնու ձագերն ուտում են խաղողի քաղցր հատիկները:

7. Գտիր տրված գոյականներին, բայերին և ածականներին տրվող հարցերը:

վաճառում էին	ծակող	համոզեց
մորթի	ընտրել	սիրում են
մերկ էին	սուր	կծակեմ
շողշողուն	վախեցած	քնքուշ

ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍ

ԿՌԻՎԸ ԳԼՈՒԽ ՉԵԿԱՎ

Ավետիք Իսահակյան

Երկու ծերունիներ ապրում էին մի բակում:

Նրանց միջև ոչ մի անգամ վեճ ու կռիվ չէր ծագել: Եվ ահա մի օր էլ ծերունիներից մեկն ասաց մյուսին.

— Այդ ինչպե՞ս է լինում, որ մարդիկ իրար հետ կռվում են: Արի՛ մի անգամ էլ մենք կռվենք:

Մյուսը պատասխանեց.

— Ես չգիտեմ, թե ինչից է ծագում կռիվը:

Առաջին ծերունին ասաց.

— Ահա այս կավե ամանը մեջտեղ եմ դնում. ես կասեմ՝ դա ի՛մն է, դու էլ թե՝ չէ՛, քոնը չէ, ի՛մն է: Սրանից էլ վեճ կծագի, վեճից էլ՝ կռիվ:

Այդպես էլ արին: Նրանցից մեկն ասաց.

— Դա ի՛մն է:

Մյուսը պատասխանեց.

— Իսկ ես գիտեմ, որ դա իմն է:

Առաջինը նորից ասաց.

— Չէ՛, քոնը չէ, ի՛մն է:

Այդ ժամանակ երկրորդ ծերունին պատասխանեց.

— Իսկ եթե քոնն է, վերցրո՛ւ, քե՛զ լինի:

Այդպես էլ իրար հետ նրանց կռիվը գլուխ չեկավ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ հարևանների կռիվը չստացվեց:
2. Մտածի՛ր՝ ընկերների մեջ ինչից կարող է կռիվ ծագել:
3. Պատահե՞լ է, որ ընկերոջդ հետ կռվես: Պատմի՛ր այդ մասին: Ինչո՞վ ավարտվեց ձեր վեճը:

Ժողովուրդն ասում է...

Կռվի մեջ փլավ չեն բաժանում:

4. Գրի՛ր ինքնաթելադրություն:

—Հիրի՛ այնփա՛ն ժանոթանանք,
Որ սկսենք մրերմանալ:
Հետո այնփա՛ն մրերմանանք,
Որ սկսենք ընկերանալ:

5. Հետաքրքիր է՝ դու գիտե՞ս...

- Ինչո՞վ են լվանում ատամները:
- Այն ի՞նչն է, որ շատ թթու է:
- Ո՞վ է վարում նավը:
- Ի՞նչ են ասում ոչխարների խմբին:
- Լոլիկն ու վարունգը ի՞նչ են:
- Ի՞նչ են ասում կոշիկ նորոգողին:
- Ի՞նչ են ասում կոշիկ կարողին:

6. Դու քո մասին կարո՞ղ ես ասել.

- Ես իմ ընկերների հետ չեմ կռվում:
- Ես օգնում եմ տատիկիս ու պապիկիս:

7. «Կռիվը գլուխ չեկավ» պատմվածքի մեջ գտի՛ր այն նախադասությունը, որը հարցում է արտահայտում: Մեկ անգամ ևս կարդա՛ այդ նախադասությունը: Ասա՛՝ ով ում է տալիս այդ հարցը:

Հիշի՛ր

Հարցում արտահայտող նախադասությունները կոչվում են հարցական նախադասություններ:

Հայերենում հարցական նշանը դրվում է հարցում արտահայտող բառի վերջին ձայնավորի վրա:



ՊԱՅՄԱՆ

Յուրի Սահակյան

— Բարև՛,— ասաց փոքրիկ տղան:
— Հազա՛ր բարին,— ասացի ես:
— Ընկեր չունե՞ս,— հարցրեց տղան:
— Այստեղ չունեմ,— ասացի ես:
— Կուզե՞ս ինձ հետ ծանոթանալ:
— Ծանոթանա՛նք,— ասացի ես:
— Անունդ ի՞նչ է,— հարցրեց տղան:
Իմ անունը ասացի ես:
Հետո այսպես ասաց տղան.
— Արի՛ այնքա՛ն ծանոթանանք,
Որ սկսենք մտերմանալ:
Հետո այնքա՛ն մտերմանանք,
Որ սկսենք ընկերանալ:
Հետո այնքա՛ն ընկերանանք,
Որ սկսենք եղբայրանալ:
Հետո այնքա՛ն եղբայրանանք,
Որ բաժանվել չկամենանք
Ո՛չ խաղի մեջ,
Ո՛չ փորձանքում,
Ո՛չ էլ ամբո՛ղջ, ամբողջ կյանքում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է բանաստեղծությունը վերնագրված «Պայման»: Ինչի՞ մասին պայմանավորվեցին տղաները:

2. Մտածի՛ր և դատի՛ր. պարտադի՞ր է արդյոք ընկեր ունենալը:

Ժողովուրդն ասում է...

- *Ընկերը փորձանքի մեջ է ճանաչվում:*
- *Ասա՛՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու:*
- *Հագուստի նորն է լավը, ընկերոջ՝ հինը:*

3. Սովորի՛ր ճիշտ կարդալ և գրել:

բարև, եղբայր, եղբայրանալ, փորձանք, ամբողջ, կյանք

4. Պատրաստվի՛ր թելադրություն գրելու:

ԸՆԿԵՐԱՍԵՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Մարիան իմ ընկերուհին է: Մենք սովորում ենք նույն դասարանում: Մարիամի եղբայրը մեզ հետ միշտ դպրոց է գալիս: Մենք որոշել ենք ամբողջ կյանքում միասին լինել:

5. **Պատմի՛ր քո մտերիմ ընկերոջ մասին:**

ԻՄ ՄՏԵՐԻՄ ԸՆԿԵՐԸ

- Ո՞վ է քո մտերիմ ընկերը:
- Ինչո՞վ է նա զբաղվում:
- Որտե՞ղ եք ծանոթացել:
- Ինչպիսի՞ հատկանիշներ ունի նա:

Հիշի՛ր

Պատմելու ձևով ասված նախադասությունը կոչվում է պատմողական նախադասություն:

Օրինակ՝ Իրար հանդիպեցին երկու տղա: Նրանք որոշեցին բարեկամանալ:

ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ



ՈՒԶՈ՞ՒՄ ԵՍ, ՈՐ ՔԵԶ ՀԻՇԵՆ

Ըստ Հայկ Խաչատրյանի

«Թե ուզում ես, որ քեզնից հետո մարդիկ քեզ հիշեն, զավա՛կ ունեցիր, տո՛ւն կառուցիր ու ծա՛ռ տնկիր»: Սա հայկական ամենահին ժողովրդական թևավոր խոսքերից է:

Ծառը բարիքի աղբյուր է. միրգ է տալիս, օդը մաքուր է պահում, պահպանում է հողի վերին շերտը, վառելիք և շինանյութ տալիս:

Հին Հայաստանում գարնանամուտին՝ մարտի 1–ից մինչև ապրիլի 26–ը, եղել է ժողովրդական մի տոն, որի ժամանակ կատարվել են ծառատնկումներ: Այդ տոնին մասնակցել են փոքրիկ տղաներն ու աղջիկները: Նրանք մեծերի օգնությամբ ու խորհուրդներով փոս են փորել, շիվ տնկել ու ջրել: Ծառ տնկող մարդը կապվում է այդ վայրի հետ ամուր հիշողությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ասա՛ մեկ բառով.

ծառ տնկելուն –
խորհուրդ տվողին –
քար տաշողին –
ջրի հորին –
հայրենիքը սիրողին –
ծնողին սիրողին –

Ժողովուրդն ասում է...

Մարդն իր գործով է անմահ։
Լավ գործ անողին երբեք չեն մոռանում։

2. **Կարդա՛ պատմության վերնագիրը։ Որոշի՛ր՝ ինչպիսի նախադասություն է այն։**

ԿՏԱԿ

Սարմեն

Ի՛մ մանկիկներ, ի՛մ ծաղիկներ,
Լսե՛ք կտակը ձեր հոր
Եվ սերնդից սերունդ անմեռ[1]
Ավանդեցե՛ք[2] նորից նոր։

Դուք ձեր մորը ջե՛րմ սիրեցեք,
Պահե՛ք ինչպես ծաղկեփունջ,
Նա ձեզ համար գիշեր–ցերեկ
Կյանք է մաշել անտրտունջ[3]։

Դուք ձեր ծնող մայր–արևի
Փառքը տարե՛ք ծեգից ծեգ[4],
Բայց ձեր մորից է՛լ ավելի
Հայրենի՛քը սիրեցեք։

Նա է աղբյուրն անմահական,
Մայրը բոլոր մայրերի,
Նա է տալիս մորն ու մանկան
Բարիքները աշխարհի։

Իմ բառարանը

1 **անմեռ** – անմահ, չմեռնող
2 **ավանդել** – սերունդներին փոխանցել
3 **անտրտունջ** – առանց տրտնջալու, առանց դժգոհելու
4 **ծեգ** – արևածագ, լուսաբաց, այստեղ՝ աշխարհի կողմ՝ եզերք, ծայր, սահման

3. Ինչ է կտակում հեղինակը բանաստեղծության տողերում: Բացատրիր կտակած յուրաքանչյուր պատվիրանը:

4. Պատմիր քո ծնողների, պապիկի, տատիկի՝ քեզ ուղղված պատվիրանների մասին:

5. Բանաստեղծության տողերում փնտրիր և կարդա՛ *ան–* նախածանց ունեցող բառերը, որոշիր դրանց արմատները:

6. Գրիր ինքնաթելադրություն:

Հայրենիքիդ անուշ ու թանկ
Ուրիշ ի՞նչ կա երկնքի տակ.
Նա է տվել ինչ հայ անուն
Ու պարգևել հայոց լեզուն:

7. Ուշադիր կարդա «Կտակ» բանաստեղծության շեշտված բառերը: Դու ճիշտ ես. դրանք հրահանգ, հանձնարարություն, հրաման են արտահայտում: Այսինքն՝ **հրամայական նախադասություններ են**:

ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ



ԻՄ ՊԱՊԸ

Համո Սահյան

Իմ պապը տնկել է
Մեր գյուղի շիվերը,
Իմ պապը պայտել է
Մեր գյուղի ձիերը:
Իմ պապը մեր գյուղի
Պատերը շարել է
Եվ բոլոր կամերը
Մեն–մենակ քարել է:
Ջրել է իր այգին
Ու մարգը բահել է
Եվ արդար քրտինքով
Իր տունը պահել է:
Իմ պապը վարել է,
Իմ պապը ցանել է,
Իսկ հնձի ժամանակ
Ձեռքի մեջ մանգաղի
Դաստակը ցավել է,
Իմ պապը հողի հետ
Խորհել ու խոսել է,
Ամպի հետ արտասվել,
Ջրի հետ հոսել է:

Այգում, դաշտում, պուրակում
Անուշ հյութ ենք հավաքում,
Համեղ բան ենք տալիս ձեզ,
Դուք ինչպես եք կոչում մեզ:

Ժողովուրդն ասում է...

Գործը վաղվան մնաց՝ իմացիր՝ կորավ գնաց։
Աշխատանքը բոլոր բարիքների աղբյուրն է։

Հարցեր և առաջադրանքներ

1. **Ի՞նչ զբաղմունք է ունեցել բանաստեղծության հերոսը՝ պապը։ Ընտրիր և նշիր քո կարծիքին համապատասխան տարբերակը.**

- կոշկակար ☐
- դերձակ ☐
- շինարար ☐
- հողագործ ☐

2. **Գտիր բանաստեղծի գործածած բայերը։ Հիշիր, որ դրանք պիտի պատասխանեն ի՞նչ է արել, ի՞նչ է եղել, ի՞նչ է անում հարցերին։**
Կարդա՛ բայերը և որոշիր, թե ով է կատարել գործողությունները։

3. **Պատրաստվիր շարադրություն գրելու։ Գրելիքդ նախ պատմիր։ Քեզ կօգնեն այս հարցերը.**

ԻՄ ՊԱՊԸ

1. Ո՞վ է իմ պապը։
2. Որտեղ է ապրում նա։
3. Ինչո՞վ է զբաղվում պապիկս։
4. Ի՞նչն է ուշագրավ իմ պապիկի մեջ։

4. Կարդա՛ բանաստեղծության տողերը՝ հաշվի առնելով երկարացման կամ բացականչական նշանը:

Իմ պապը տնկել է
Մեր գյուղի շիվերը,
Իմ պապը պայտել է
Մեր գյուղի ձիերը:

Հիշի՛ր

Բացականչություն, զարմանք, հուզմունք կամ ցանկություն արտահայտող նախադասությունը կոչվում է բացականչական:

Կարդալիս բացականչության նշան ունեցող բառը երկար է արտասանվում: Բացականչություն արտահայտող բառի վերջնավանկի ձայնավորի վրա պետք է դնել բացականչական նշան (՛):



ՈՒԼԻԿԸ

Հովհաննես Թումանյան

Խոր անտառում մի այծ է լինում: Ունենում է մի գեղեցիկ ուլիկ: Ուլիկին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է ու իրիկունը կուրծքը լիքը տուն է գալիս:

Տուն է գալիս, դուռը զարկում ու մկկում, կանչում.

— Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթ եմ բերել քեզ համար:
Դռնակը բա՛ց՝ ներս գամ ես,
Անուշ–անուշ կաթ տամ քեզ,
Սևո՛ւկ ուլիկ, սիրո՛ւն բալիկ:

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բացում: Մայրը կաթ է տալիս նրան ու կրկին գնում արոտի:

Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը թակում է ու իր հաստ ձայնով կանչում.

— Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ,

Ման եմ եկել սարեսար,
Կաթ եմ բերել քեզ համար:
Դռնակը բա՛ց՝ ներս գամ ես,
Անուշ–անուշ կաթ տամ քեզ,
Սևո՛ւկ ուլիկ, սիրո՛ւն բալիկ:

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում.

— Ո՞վ ես դու, քեզ չեմ ճանաչում: Իմ մայրն էդպես չի կանչում: Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քո ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուռը բաց չեմ անի... Գնա՛... Չեմ ուզում քեզ...

Ու գայլը հեռանում է: Գալիս է մայրը, դուռը ծեծում.

— Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ,
Ման եմ եկել սարեսար,
Կաթ եմ բերել քեզ համար:
Դռնակը բա՛ց՝ ներս գամ ես,
Անուշ–անուշ կաթ տամ քեզ,
Սևո՛ւկ ուլիկ, սիրո՛ւն բալիկ:

Ուլիկը դուռը բացում է, կաթը ուտում ու մորը պատմում.

— Գիտե՞ս, մայրի՛կ, ինչ եղավ: Մի քիչ առաջ մեկը եկավ, դուռը ծեծում ու կանչում էր.

— Սևո՛ւկ ուլիկ,
Սիրո՛ւն բալիկ...

Ասում էր՝ դուռը բա՛ց արա: Էնպես հաստ ձայն ուներ: Էնպե՛ս վախեցա, էնպե՛ս վախեցա... Դուռը բաց չարի, ասի՝ չեմ ուզում, գնա՛...

— Պա՛, պա՛, պա՛, պա՛, Սևո՛ւկ ջան: Ի՞նչ լավ է եղել, որ չես բացել,— ասաց վախեցած մայրը:— Դա գայլն է եղել. եկել է, որ քեզ ուտի: Մյուս անգամ էլ որ գա, բաց չանես, ասա՝ գնա՛, թե չէ իմ մայրը քեզ կսպանի իր սուր պոզերով:

ԱՄԱՌ

Ռուբեն Ղարիբյան

Խաղաղ դաշտերին
Իջել է ամառ,
Բերել է երկրին
Բարիք անհամար:
Քամին մեղմօրոր
Համբույր է տալիս,
Հասկերը շորոր
Գնում են, գալիս:
Տանձը դեղնել է,
Խնձորը՝ շիկնել,
Սեխը ելել է,
Իր թաղին[1] թիկնել...
Կրակ է մաղում[2]
Արևը վերից,
Խաղողն է շողում
Կանաչ թփերից...
Ծաղկած դաշտերին
Իջել է ամառ,
Բերել է երկրին
Բարիք անհամար...

Իմ բառարանը

[1] **թաղ** – այստեղ՝ թուփ
[2] **մաղել** – այստեղ՝ թափվել, ինչպես ջուրը ցնցուղից

ՏՈՒՆԴԱՐՁ

Աշոտ Գալստյան

Հայաստա՛ն աշխարհ, դրախտի՛ երկիր,
Դու սո՛ւրբ իջևան Նոյ նահապետի,
Հայոց քաջերին քո գի՛րկը կանչիր,
Ուխտի պիտ գնանք երկիր հայրենի:

Ձավակներդ թող միշտ անպարտ լինեն,
Ապուպապերի գործով հավերժեն,
Սուրբ Էջմիածնի լույսով զորանան
Ու ժայռերի պես միշտ հպարտ մնան:

Երկի՛ր Նաիրի, իմ Հայո՛ց աշխարհ,
Ծաղկի՛ր ավելի, ոստա՛ն հայրենի,
Թո՛ղ որդիներդ Արարատ կանչեն,
Թո՛ղ արևներդ քեզ հար ջերմացնեն:

Խոսք՝ ***Ա. Գալստյանի*** Երաժշտ.՝ ***Կ. Խառատյանի***





ՄԵՐ ՏԱՆ ՄԵՋ

Սիլվա Կապուտիկյան

Մի գանձ ունենք մեր տան մեջ,
Նրանով ենք երջանիկ,
Սեր է տալիս նա անշեջ[1],
Նրա անունն է մայրիկ:

Մի ուժ ունենք մեր տան մեջ,
Հաց է տալիս ու բարիք,
Բերդի նման անառիկ
Մեզ պաշտպանում է անվերջ,
Նրա անունն է հայրիկ:

Մի աստղ ունենք մեր տան մեջ,
Նա լուսատուն է մեր տան,
Հույս ու լույս է տալիս մեզ,
Եվ անունն է Հայաստան:

Իմ բառարանը

[1] **անշեջ** – անմար, մշտավառ

ԾԱՂԻԿՆԵՐ

Լյուդվիգ Դուրյան

Վա՜յ, այս ինչքա՜ն ծաղիկներ կան,
Այս որտեղի՞ց նրանք եկան,
Որ զուգեցին սարալանջը.
Ինձ ժպտում են ալ կակաչը
Եվ դեղնավառ հրանունկը
Եվ արևաչ անմոռուկը,
Կուժկոտրուկն ու մանուշակը,
Շուշանների ճերմակ շարքը:
Վա՜յ, այս ինչքա՜ն ծաղիկներ կան,
Այս որտեղի՞ց նրանք եկան,
Ո՞վ է բերել, ո՞վ՝ այսքանը,
Որտե՞ղ էին ցուրտ ձմռանը:
— Ես եմ բերել,— արևն ասաց,
Ու ժպտալով նայեց նա ցած,—
Ես եմ բերել, որ դու, տղա՛ս,
Ծաղիկների հետ էլ խաղաս,
Որ նրանց հետ ու նրանց պես
Լինես ուրախ ու ժպտերես:
Տղան ուրախ նայեց վերև,
Ասաց՝ դու ի՞նչ լավն ես, արև՛:

ԱՆԱՀԻՏ ԱՍՏՎԱԾՈՒՀԻՆ

(ըստ «Ինչ է, ո՞վ է» հանրագիտարանի)



Հայերը քրիստոնեությունն ընդունելուց առաջ պաշտում էին շատ աստվածների՝ Արամազդ, Աստղիկ, Վահագն, Տիր, Վանատուր: Սակայն բոլորից շատ սիրում էին Անահիտ աստվածուհուն, որը Հայաստանի պահապան դիցուհին էր: Հայոց Տրդատ թագավորը նրան անվանում էր «Փառքը մեր ազգի և մայրն ամեն բարիքների»:

Հայաստանի զանազան քաղաքներում կառուցված էին Անահիտի շքեղ տաճարները՝ ոսկեղեն մեծ արձաններով: Անահիտի ամենահոյակապ ոսկեղեն արձանը Երիզա քաղաքում էր: Տարին մի քանի անգամ այստեղ մեծ ու շքեղ հանդեսներ էին կազմակերպվում: Դրանցից ամենափառավորը, որը վերածվում էր տոնակատարության, օգոստոսի 15–ին էր: Այդ տոնը կոչվում էր Նավասարդ: Քաղաքի փողոցները տոնակատարության օրերին զարդարում էին, պատուհաններին կախում թանկարժեք կերպասներ: Բոլորը՝ ծերերը, կանայք, երեխաները, գույնզգույն ծաղիկներով, գլխներին պսակներ դրած, դալար ճյուղեր էին նվիրում Անահիտին, երգեր ձոնում նրան...

Նոր տարվա այս տոնակատարությունը տևում էր յոթ օր և յոթ գիշեր:

Հիշիր

Ամառվա ամիսներն են՝ հունիս, հուլիս, օգոստոս:

ԱՐՋՆ ՈՒ ՕՁԸ

Ավետիք Իսահակյան

Ինչպես եղավ, որ մի անգամ
Արջն ու օձը դարձան ընկեր,
Ընկեր դարձան ու բարեկամ:
«Մեկս քնի,
Մեկս հսկի,
Իրար շահենք,
Իրար պահենք,
Ընկերովի կյանք վայելենք»:
Այսպես ասին, երդվեցին,
Իրար ազնիվ խոսք տվեցին,
Օձը՝ արջին, արջը՝ օձին:
Անցավ այս կերպ մի ժամանակ:
Եվ շարունակ
Երկու ընկեր սիրով, սրտով
Նստան ելան ու քուն մտան
Կարգով, հերթով:
Սակայն օձի սողքը[1] բեկ–բեկ[2]
Դուր չէր գալիս արջին երբեք:
Ու մի օր էլ արջը ժայռին

Թիկն էր տվել[3] արևկողի[4],
Հանկարծ օձը ոլոր–մոլոր
Եկավ ասես գաղտագողի:
Վախ ու կասկածն առավ արջին,
Ելավ կանգնեց, նստեց տեղում.
— Ես ծուռումուռ գնացողին,
Ընկեր լինի, թե կաթնախպեր[5],
Չէ՛, չեմ սիրում, ես չեմ ուզում:
Գոռաց այսպես և թաթն ուժգին
Դրեց, սեղմեց օձի գլխին
Ու մյուս թաթն օձի մարմնով
Մինչև պոչը քաշեց թափով:
Ապա մոտիկ հոսող գետին
Հանձնեց օձի անկենդան դին:
Եվ նայելով ջրերի հետ
Նետի նման սուրող օձին՝
Գոհ մռթմռթաց բեղերի տակ.
«Ա՛յ, ընկերը էսպես շիտակ
Պիտի լինի,
Դե՛հ, շիփ–շիտակ գնա՛ հիմի»:

Իմ բառարանը

1 **սողք** – սողալը
2 **բեկ–բեկ** – ոլոր–մոլոր, ծուռումուռ
3 **թիկն տալ** – թիկունքով հենվել, թիկնել
4 **արևկող** – արևի տակ նստած, մեջքը արևին արած
5 **կաթնախպեր** – մեկ մոր կաթով սնված ոչ հարազատ եղբայրներն իրար նկատմամբ

Ճանաչի՛ր նրանց:

Կենդանիներ

ուղտ

առյուծ

վագր

հովազ

արջ

ընձուղտ

սկյուռ

եղջերու

եղնիկ

կապիկ

աղվես

գայլ

Թռչուններ

բու

բազե

փայտփորիկ

ջայլամ

հոպոպ

սիրամարգ

կաքավ

լոր

փասիան

արագիլ

անթևուկ

արծիվ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ 4
ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍ 7
ԵՐՐՈՐԴ ԴԱՍ 10
ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍ 13
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ 17
ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ 21
ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍ 25
ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ 29
ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ 33
ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՍ 36
ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԴԱՍ 39
ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԴԱՍ 42
ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԴԱՍ 45
ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԴԱՍ 48
ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍ 51
ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍ 54
ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍ 57
ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍ 60
ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՍ 63
ՔՍԱՆԵՐՈՐԴ ԴԱՍ 66
ՆՅՈՒԹԵՐ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 69

ԶՈՒԼԻԵՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

ՄԱՅՐԵՆԻ

3

Դասագիրք
Սփյուռքի դպրոցների համար

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գեղարվեստական խմբագիր՝ Արա Բաղդասարյան
Համակարգչային ձևավորումը՝ Աննա Գալոյանի
Սրբագրիչ՝ Գոհար Կիրակոսյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 70x100 1/16:
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 2000:

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23-25-28, հեռապատճեն՝ (+37410) 23-25-95
Էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am